ե, քան հացահատիկային տնտեսութեան բարձրացման խնդիրը, քանի վոր հոտի կորսված մասի վերականգնման և նոր հոտի կուտակման համար կաշահանջվեր ավելի շատ ժամանակ, քան ցանքսատարածութեան ընդարձակման համար: Այդ պատճառով ել հետագա ուշացումներն այդ բնագավառում կատարելապէս անթույլատրելի յեն: Հացահատիկային տնտեսութեան բնագավառում կարևոր հսկողութիւններն անասնապահութեան քանակային և վորակային աճման խնդիրը կատարելապէս իրական են դարձնում: Անհրաժեշտ և ձեռք քաշել որվա համար ապրելուց, գիշատիչութեանը պետք է վերջ տալ, վորը հաճախակի տեղ է դրավում մատակարարող և կարգավորող մարմինների աշխատանքում, վորոնք իրենց առաջ միտին այսորվա պահանջներին բավարարելու խնդիր են դնում:

**ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈՒԼԱՆՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ԴԵՄ՝ ԱՆԱԱՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Ներկայումս կուլակն ագիտացիա չի տանում նրա համար, վորպէսզի չքավորները և միջակները կուտնտեսութեան մեջ մտնեն առանց սեփական անասունների, վաճառելով անասուններն այն հաշվով, վոր խորհրդային իշխանութիւնը նրանց տրուկտոր կտա: Կուտնտեսութիւնները մտնող չքավորներից և միջակներից վոմանք՝ այդ ագիտացիայի ազդեցութեան տակ են ընկնում, դրանով իրենց սակավ գիտակցութիւնը դրսևորելով: Կուտնտեսութիւն մտնելուց առաջ վաճառում են իրենց անասունը, վորից հաճախ կուլակն է շահվում, վորը ոգտվելով անասունների գների իջեցումից, չարաշահում է, իսկ միջակը յերբեմն կուտն-

տեսութիւնն եւ մտնում կենդանի ինվենտարի կրճատ-
ված քանակով: Իսկ դրամը պահում եւ իր գրպանում,
վորպէս ապահովութիւնն ալն ուրվա համար, չերբ կո-
տնտեսութիւննից վոչինչ դուրս չի դալ:

Մենք պետք եւ ամենավճռական պայքար մղենք, վոր-
պեսդի նման լերեւոյթները վոչնչացնենք: Միջակ ճնշե-
սութիւնները պէտք եւ իմանան, վոր կոյսնեստութիւններն
անդամներ բնդունելիս պէտք եւ բավական հիմնականապէս
կոնստոյի յեմբարկէն նրանց նախկին գույքային դրութիւ-
նը յիվ նրանց նկատմամբ, վորոնք կմեղկացվեն վորպէս
արհեստական կերպով իրենց ճնշեստութիւնը փոքրացնող-
նէր,—կոյսնեստութիւնները նմաններին, վորպէս կոյակ-
ների ռժանդակողների, չեն բնդունել, քանի վոր նրանք
կոյսնեստութիւնների շինարարութեան բնդհանուր գործում
գիտակցաբար մասնակցել չեն ցանկանում:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Անասնապահութեան մեջ հիմնական թուլութիւնը
կայանում եւ նրանում, վոր անասունների ալն անկու-
մը, վոր կատարելապէս անխուսափելի չե չեղել անհա-
տական տնտեսութիւնների մի քանի խմբերի համար,
չի փոխարինվել, ինչպէս դա տեղի չե ունեցել հացահա-
տիկային տնտեսութեան բնագավառում՝ անհատական
տնտեսութիւնների ալ խմբակների, կոլտնտեսու-
թիւնների եւ սովխոզների միջոցով: Մեր սովխոզներն
անասունների միանգամայն չնչին մասն են համայնաց-
րել: Համայնացվածների տեսակարար կշիռը 1828/29 թ.
չեղջուրավոր անասունների վողջ հոտերի միալն 0,30%
եւ կազմել: Կոլտնտեսութիւններում եւս դեռ գործը
վատ եւ անցյալ տարվա վերջը կոլտնտեսային հոտը տ-

նասուճանների ամբողջ քանակի $\frac{1}{2}\%$ ե կազմել։ Այսպիսով նոր տնտեսական տարվա սկզբին համայնական ամբողջ հատվածը յեղջուրավոր անասունների հոտից 1% -ից ավելի քչին եր տիրում։ Այդ, իհարկե, անասնապահության մեջ սոցիալիստական հատվածի դիրք անվանել վոչ մի կերպ հնարավոր չե։ Այդ դիրք չե,— սատանան դիտե, թե ինչ ե այդ։

Հոտի աճման մոտ 60% մեզ մոտ չուրաքանչյուր տարի վոչնչանում ե՝ անասնաբուժական, պրոֆիլակտիկ ե անասունների տարրական խնամքի գործը խայտառակ դնելուց։ Յուրաքանչյուր տարի, շնորհիվ անասունների հիվանդության, կաթնատվության անկման ե նրանց կաշվի ու բրդի վորակի մեջ ունեցած կորուստից գրեթե $\frac{1}{2}$ միլիարդ ուրբլի չենք կորցնում։ Վորպեսզի այդ բնագավառում հարկավոր հեղաշրջում ապահոված լինենք, անհրաժեշտ ե վոչ միայն կոլտընտեսության սեկտորի մեջ անասնապահության զորացումը, վորը մինչև վերջին ժամանակներս անուշադրության եր մատնված, այլ ե մի ամբողջ շարք այնպիսի միջոցներ, վորպիսիք մենք անց ենք կացրել դաշտաբուժության մեջ։ Յեթե մեզ հաջողվեց հացահատիկային տնտեսության մեջ անցկացնել լայն, բայց իր հիմքում հասարակ ե չուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը մատչելի ձեռնարկումների մի ամբողջ սխառեմ, միացված վորպես ագրոմինիմում միջոցների մի կոմպլեքս, ապա այդ մինիմումն անհրաժեշտ ե անցկացնել անասնապահության մեջ, վորպես հատուկ անասնամինիմում։ Անասնամինիմումն իր մեջ պետք ե առնե գյուղացիական մանր տնտեսությունների համար մատչելի միջոցներ, վորոնք իրենց մեջ կընդգրկ-

կեն և խոտի, արմատապտուղների ցանքսերի ընդարձակումը, ինչպես և լեզների պահպանման համապատասխան ընկերութլուները, մատղաշ անասունների պահպանման, ուղիղ խնամելու և ալլ կազմակերպութլուներ, վորոնք անհատական տնտեսութլուների կոտպերացման պայմաններում կատարելապես հնարավոր և բոլորովին մատչելի դործ են հանդիսանում միջակ և չքավոր տնտեսութլուների համար:

Այն պատճառով, վոր ալս տարի պլանների մեջ անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվել անասնապահութլան վերաբերյալ պետք լեղած միջոցներ, մենք հարկադրված լեղանք միամբողջ շարք հատուկ միջոցների դիմել, վորոնք անհրաժեշտ ելին դարձել մի շարք տեղերում բերքասակավութլան հետեանքով—պայմանավորված կերի պակասութլան տագնապալից պայմաններում: Մենք փորձեցինք ալլ վործի համար մի փոքրիկ վարկային հավաքարկում անել ալն իմաստով, վորպեսզի կերի սակավութլունը հաղթահարենք և դա ելապես անասնապահութլան բնագավառում մեր հետոմնացութլան շոշափելի ցուցանիշն և հանդիսանում:

Անասնապահական բնագավառի առաջդրումները, վորոնք կտն ալս տարվա հսկիչ թվերում, անհրաժեշտ շրջադարձ են ապահովում ալդ բնագավառում: Սեփայն կարևոր և հաշվի առնել, վոր պետական միջոցները բավական չեն, ալդ պատճառով ել անհրաժեշտ և հենց դլուղացիութլան և բոլոր ստորին կազմակերպութլուների ուշադրութլունը դարձնել դլուղացիական միջոցների հավաքարկման գործի վրա՝ անասնապահութլան կարիքների համար:

Անասնապահութլան զարգացման վերաբերյալ ձեռնար-

կումները պետք է ուղղված լինին,—կոնցենսություններում յեվ սովյսոզներում՝ անասնապահական ճնշեսությունների խոտորացման յեվ բնդարձակման կողմը, չավոր-միջակ ճնշեսություններում՝ անասնապահությունը ուժեղացնելու կողմը, կերային կետերի վերակազմակերպելու, ազնվացման բազաների ուժեղացնելու, անասնաբուժական ձեռնարկումների բարելավման յեվ համապատասխան կադրեր պատրաստելու կողմը:

Կադրերի խնդիրը մեզ մոտ, մեր շինարարության բոլոր բնագավառներում ել ամենասուր, ամենահիվանդոտ խնդիրն է հանդիսանում: Սակայն հաղիվ թե կադրերի պատրաստման և ապահովման տեսակետից ժողովրդական տնտեսության մեջ կա ավելի հետամընաց բնագավառ, քան անասնապահությունն է:

Մենք այնպիսի ձեռնարկումներ պետք է ծավալենք անասնապահության բարձրացման նկատմամբ, վորոնք կարող են և պետք է համապատասխան արդյունքներ տան միայն մի հայտնի ժամանակից հետո: Բայց մենք պետք է նույնպես լուրջ ուշադրություն դարձնենք և այն միջոցներին, վորոնք կարող են անհապաղ արդյունք տալ, վորպեսզի մեր սննդի,—մսի, կաթնամթերքի և այլի բալտնսը բարելավենք: Մի շարք միջոցներ արդեն իսկ կարող են անհապաղ կաթի և մսի ավելացում տալ: Խոզաբծությունը Միության մեջ ամենից շատ չափով է անկում հայտնաբերում (մոտավորապես 15 %). մինչդեռ մենք կատարյալ հնարավորություն ունենք ՌՄՖՍՀ սահմաններում, վորտեղ ընդհանրապես խոզաբծությունը թուլ է զարգացած, բարձրացնել այն շատ մեծ չափերով:

Պետք է ձգտել, վորպեսզի կոլտնտեսություններում

բացի մի քանի ազնվացեղ խողերից, պահվեն չորս-հինգ տասնյակի չափ խողեր մտացվի համար: Դա առանձին մեծ ծախսեր չեն պահանջիլ, քանի վոր լուրաքանչուր կոլտնտեսութիւն մեջ լինում են ավելցուկներ, վորոնք գործ կածվելին կերի համար: Նույնը վերաբերում է նաև թռչնաբծութիւնը: Իսկ լեթե մենք հաշվի առնենք հասարակական սննդի ավելցուկները քաղաքում, ողիի գործարաններինը և այլն, ապա դուրս կգա, վոր մի տարվա ընթացքում մենք խողի այնպիսի մեծ հոտ կարող ենք զարգացնել, վորը քաղաքների և բանակի մօտ պահանջի խոշոր մաս կծածկի:

Մեզ մոտ կան դեռ վորո՞ւ բանակութեամբ այնպիսի սովխողներ յեվ կոյսնեստութիւններ, վորոնց անցնեստավարութեան համար կարելի չես տեսլ, վոր նրանցում մեծ խողութիւն կա: Մեզ համար շատ շահավետ կլինեք, յերե այնեղ սակավ խողութիւն լինեք յեվ շատ խողաբծութիւն: Ինչքան կոլտնտեսութիւններում և սովխողներում սակավ լինին անտնտեսավարութիւն և խողութիւն, այնքան ավելի կանն անասնապահական սեկտորը, վորոնց թվում և խողաբծութիւնը, և կաթնատնտեսութիւնը, և թռչնաբծութիւնն ու այդպիսով արագ կլուծվի անասնապահութեան խնդիրը:

Անասնապահութեան բնագավառում հիմնական պիտի համարվեն այն միջոցները, վորոնք համայնացված տնտեսութեան գծով են ընթանում: Բայց բոլորովին ճիշտ չեք լինի բերազնահատեղ այն իրական հնարավորութիւնները, վորոնք կան անհատական տնտեսութիւններում: Այդ հնարավորութիւնների թերազնահատութեամբ մի շարք սխալներ են առաջացած, յերբ մենք

բացորոշապես միջակ տնտեսութւո՞ւնները սխալմամբ կուլակային ենք հաշվել: Այդ սխալները բաւական ուժեղ ազդեցութւո՞ւն են տնում տնասնապահութւան վրայ: Միջակ տնտեսութւո՞ւնը, վոր այս կամ ա՛յն մարմնի կողմից անարդարացի կերպով կուլակային կամ նրան մոտեցող տնտեսութւան մեջ և հաշվվում, ըսկսում և կրճատել իր հոտը: Մենք գլուղացիութւանը պետք և բացատրենք, վոր կաթնատու և այլ անասունների աճումն ինքնին, անկախ այլ հանգամանքներից, վորոշող նշան չի հանդիսանում տվյալ տնտեսութւան մեջ շահագործող տարրի գոյութւան համար: Եես կտրծում եմ, վոր կատարելապես ճիշտ են այն միջոցները, վորոնք ներկայումս մշակվում են կառավարութւան կողմից և նպատակ ունեն միանձնյա չքավոր և միջակ տնտեսութւո՞ւնները գլուղատնտեսական հարկի տեսակետից այնպիսի դրութւան մեջ դնել, վորով նրանց համար շահավետ կլիներ լայն կերպով դարգացնելու անասնապահութւո՞ւնը:

Յուրաքանչյուր միջակ յեղ չփախւոր պե՞տ և հասկանա, վոր հոսի կրնատուր պետութւան հանդեպ ուղակի վնասաբարություն եւ ինձ թվում և, վոր անասնապահութւան վերաբերյալ շրջադարձը պետք և արտահայտվի ի միջի այլոց նրանում, վոր պետութւո՞ւնը առանձին ուշադրութւամբ պետք և վերաբերվի կերային հաշվեկշռին: Այդ խնդրին պակաս ուշադրութւո՞ւն չպետք եղարձնվի, քան դարձնվում և հացաֆուրածային հաշվեկշռին: ԽՍԽՄ-ի և ՌՍԾԽՀ-ի կառավարութւո՞ւնները յուրաքանչյուր տարի յերբեմն մի քանի անգամ հացաֆուրածային հաշվեկշռին են լսում և շատ մանրազնին կերպով և ուշադրութւամբ այն ուսումնասիրում

են: Նման ուշադրութիւն պետք է ապահովված լինի
և լերկրի կերպին հաշվեկշռին:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՍԿԱ- ՅԱԿԱՆ ԱՃՈՒՄ Ե ԱՊԱՀՈՎՈՒՄ

Իմ ղեկուցման սկզբում լեռ խոսեցի արդունարեւո-
թյան մեջ կապիտալ ներդրումների ոգտավետութեան
մասին, վորոնք բարձրացնելով արտադրանքի քանա-
կը և նրա ինքնարժեքն իջեցնելով, պայմաններ են
ստեղծում գների հետագա ցածացման համար: Այդ ա-
մենակենդանի պաշտպանութիւն պետք է գտնի գյու-
ղացիութեան կողմից:

Այժմ լեռ կուղելի բերել վորոշ տվյալներ, պատկե-
րավորելու համար այն խոշոր ներդրումների ոգտա-
կարութիւնը, վորոնք կառավարութեան կողմից գյու-
ղատնտեսութեան մեջ են դրվում:

Նույնիսկ, հաճախ շատ ցածր աշխատանքի վորակի
ներկա պայմաններում, մենք ունենք բավական ար-
տահայտիչ թվեր, վորոնք այն մեծ կտրելիութիւն-
ների մասին են վկայում, վոր գյուղատնտեսութեան
դարգացման գործում ունին խորհրդային իշխանու-
թիւնը, բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը:

Վորպես որինակ լեռ կբերեմ Տալովյան տրակտո-
րային կալոննան, վորը գտնվում է Կենտրոնական
սեռահող մարզում: Կալոննան կազմակերպված է լեղել
1928թ. աշնանը 6 հազար հեկտար տարածութեան վրա
և ընդգրկել է 11 գյուղ 551 տնտեսութեամբ:

Նկատի ունենալով նրա ուշ կազմակերպման և ան-
բավարար կազմակերպվածութեան փաստը, այդ կա-
լոննային հաջողվեց աշնանավար տնելու միայն 2 ¹/₂
հազար հեկտար տարածութեամբ:

Տակտորաշարքի կահավորումը 1 հա-ի համար հիմ-
նական ներդրում է տվել 11 $\frac{1}{2}$ ուղււր, Կենտ. սեահող.
մարդում 1 հա-ի համար միջին հաշվով 8 ու. 30 կ.
հիմնական ներդրում լինելով: Գարնանը տրակտորա-
շարքը լրացրել է իր ինվենտարը, վորի շնորհիվ 1 հա-ի
համար հիմնական ներդրումը բարձրացել է մինչև 12
ուղււր: Բնորոշ է, վոր հիմնական ներդրումների աչդ
բարձրացումը թույլ է տվել տրակտորաշարքին ցան-
քատարածութունն ընդարձակելու 2162 հա-ով, վո-
րը կադմում է ամբողջ տարածութուն 28 $\frac{1}{2}$ 0/0, իսկ
ընդհանուր ցանքատարածութւան ընդարձակումը
աչդ շրջանում տեղի է ունեցել միայն 2,7 0/0: Հողա-
գործական աչն ձեռնարկութւնների կոմպլեքսը, վորոնք
կիրառված են լեղել աչդ տրակտորաշարքի աշխա-
տանքի մեջ, հնարավորութւուն է տվել, ուսոնի մի-
ջին բերքատւութւան համեմատութւամբ 1 հա-ի հա-
մար բարձրացնել՝ վարատկինը՝ 15 $\frac{1}{2}$ 0/0, աշնանա-
ցան ցորենինը՝ 37 $\frac{1}{2}$ 0/0 և արեածաղկինը՝ 72,4 0/0: Մի-
ջին հաշվով բոլոր մշակութւնների նկատմամբ ընդհա-
նուր հասուլթ է ստացված 1 հա-ի համար տրակտո-
րաշարքում՝ 12,6 ցենտներ, մեր շրջանում՝—9,1 ց,
վոր բերքատւութւան բարձրացում է նշանակում
23,7 0/0:

Տրակտորային շարքում 1 հեկտարից ստացված ընդ-
հանուր արժեքը 99 ու. 96 կ. է հաշվվում, իսկ ամբողջ
ուսոնում 60 ու. 95 կ.: Այսպիսով մեկ տարուց ստկավ
տեղողութւան ընթացքում տարբերութւունն է 30
ուղււրի:

Ապրանքականութւան նշանակալից բարձրացումն,
այսպիսով, մեր առջև է:

Յեթե մեզ հաջողվի ստանալ տրակտորների և արտադրութեան ալ միջոցների նախատեսնված քանակութիւնը, յեթե մենք ոգտագործենք նրանց լրիվ կերպով և առավելագույն բեռնվածութեամբ (իսկ ալ մենք պետք եւ անհնք), ապա այս տարի մենք կարող կլինենք մեր գյուղատնտեսութեան զարգացմանը հըսկալական խթանում տալ և մի ավելորդ անգամ հերքել տնտեսական այն անվստահութիւնը՝ հանդիպմեր գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման, վորը դեռ կա գյուղացիութեան առանձին խավերում և այն տարակուսանքը, վորը յերևան յեկավ մեր կուսակցութեան տատանվող և մանր բուրժուական ուժերի արդիցութեան յենթակա տարրերի մեջ:

ԼԱՐՎԱԾ ՊԱՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԲՈՂՈՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԼԱՐՎԱԾ ՈՒԹՅՈՒՆ

Անգլիական «Եկանոմիստ» ժուռնալում լույս տեսան մի շարք հոդվածներ, նվիրված գյուղատնտեսութեան վերակառուցմանը և հնգամյա պլանին: Այդ հոդվածներից մեկում ասվում ե հետևյալը.

«Հարկավոր ե ըմբռնել, վոր Ռուսաստանում ներկայիս ինդուստրացումը վոչ թե աճման նորմալ մի պրոցես ե, ալ հետևանք արտաքո կարգի դրդման: Ինդուստրալէս հետամնաց շատ յերկրներում նման զարգացումը սովորաբար ոտարեկրջա փոխառութիւններով ե ոժանդակվում և ունենում ե տասնյակ տարիների տևողութիւն: Ռուսաստանի ինդուստրացումն ալ ընթացքով սկսվեց 90-ական թվականներին և ժողովրդի համար ծանրութիւն չհանդիսացալ. ավելի շուտ նրա համար որհնութիւն եր ալդ. քանի վոր

նա ասպադսլի փթթման հեռանկարները չե՞ր կաշկանդում, այլ անմիջապես լայնացնում ե՞ր առևտուրը և տալիս ժողովրդին ավելի շատ աշխատանք: Բոլորովին այլ բան է հնգամյա պլանը, վորը կարող է ֆինանսավորվել միայն ազգային լեկամոտների հավաքարկման միջոցով, և կարող է նշված ժամանակաշրջանում կատարվել միայն ամենամոտակալի պոհաբերությունների միջոցով, քանի վոր մոտամտաւանը չունի սեփական կուտակված կապիտալներ և չի կարող նրանք ստանալ իր հարեաւաններից: Յեթե անգամ պլանը լինե՞ր զարմանալի հաջող և վերջին հաշվով բարձրացներ ընդհանուր բարեկեցությունն, այնուամենայնիւ՝ նա չարատանջ մի պրոցես կլինե՞ր, վորը չերկրի ինչպես նյութական, նույնպես և հոգեկան ռեսուրսների վրա արտաքո կարգի ծանրություններ կդնե՞ր: Նման դրության մեջ, չե՞ր ժողովուրդը, վորն ապրելով համարյա թե ամենացածրագույն մակարդակի վրա, նորից հրավիրվում է բոլորը զոհաբերել ազգային գործի համար, նրա «տրամադրության» պահպանումը հաղթանակի միակ չերաշխիքն է հանդիսանում»:

Արեւմտյան Յեվրոպայի բուրժուազիայի գիտական ներկայացուցիչներն իրենց միտքարում են նրանով, վոր մեր պլանը հսկայական լարումն և շատ մեծ գիտակցություն է պահանջում, և ըստ չերեուլթին հաշվում են, վոր այդ գործի համար մեր ուժերը չեն բավիլ: Խոսք չկա—դժվարություններն ու փորձանքները շատ են մեծ, նրանցից զինաթափ չեղան կուսակցության առանձին ներկայացուցիչները, վորոնք արտացոլում են ինչ բանվոր դասակարգի ամենից անկաշու խավերում չեղող հայտնի տատանումներէ: Ուղիղ և

վճռական դժից ալդ թեքվողները չկարողացան սպառ-
ման շահերը արտադրութւան շահերին լինթարկելու
բնագումլառում ծալրերը իրար հետ կապել: Այսորվա
կարիքի պատրանքալին բավարարումը նրանք արտա-
դրութւան խնդիրներից բարձր դասեցին, վորը միայն
կարող և տալ կայուն բազա՝ ապագայում աճող պա-
հանջների բավարարման համար: Հարցերի լուծումը
հուլուտ այսորվա պահանջների բավարարման վատ
պատրանք կլիներ, քանի վոր հետ փախչելով այսոր-
վա դժվարութլուններից, խուսափելով նրանցից և ա-
վելի դուրին ուղու վրա անցնելով ու ընթանալով
ամենաթույլ ընդդիմութլան դժով, մենք փաստապես
կդնալինք դժվարութլուններ կուտակող ուղիով և
կգլորվելինք կապիտալիստական զարգացման ճանա-
պարհը: Այդ պատճառով ել «տրամադրութլան» հա-
վաքարկումն ու պահպանումը, ինչպես «Եկանոմիստի»
հողվածի հեղինակն և արտահայտվում, անհրաժեշտ
պայմանն և հանդիսանում մեր լարված ծրագրի:

Մենք թեև ի չարն ենք գործածում «լարված տեմպ»,
«լարված հսկիչ թվեր» և այլն խոսքերը, բայց հաճախ
ըստ ելութլան անթուլլատրելի բարեհոգութլուն և
հուլսեր ենք հալոնաբերում դեպի աշխատանքի ինքնի-
րեն կատարվելը:

Հիմնական դժվարութլուններից մեկը, վորը «Եկա-
նոմիստի» կարծիքով մենք չենք կարող հաղթահարել,
մեր ֆինանսական դրութլան լարվածութլունն և հան-
դիսանում:

«Հնգամյակի հեղինակները, գրում և «Եկանոմիս-
տը», առաջարկում են 86 միլիարդ ռուբլի հավաքար-
կել, իրենց սխեման իրականացնելու համար: Այդ

նշանակում է, վոր նրանք մտածում են նրա վրա ծախսել հինգ տարվա ազգային հասույթի գումարի 48⁰/₀-ից վոչ պակաս մասը: Այդ թվերն, ինչպես նրանք կան, բավական տատանվող են, բայց նրանք ավելի ևս առասպելական կդառնան, լեթե նկատի ունենանք, վոր ֆինանսական պլանը միտում ունի յուրաքանչյուր տարի ազգային հասույթի ավելի և ավելի մեծ մասը կլանելու: Այդ հասույթը, ըստ ակնկալութունների, կաճի 24 միլիարդ ռուբլուց՝ 1928 թվում, մինչև 40,7 միլիարդ՝ 1933 թվում: Հինգ տարում աճումն է՝ 64 ⁰/₀, այնինչ ֆինանսական պլանն իր պահանջների աճում է նախատեսում 105 ⁰/₀-ով, այսինքն 9,5 միլիարդ ռուբլի՝ 1928/30 թ. մինչև 19,5 միլիարդ՝ 1933 թ.:

«Եկանոմիստը» գտնում է, վոր ֆինանսական պլանն իր մեծութամբ առասպելական է, ազգային հասույթի վիթխարի մասի հավաքարկումը պահանջող, ուստի և մեզ համար անիրագործելի: Հարկավոր է ասել, վոր լեթե մենք պետք չիղած լրջութամբ ձեռնամուխ չլինենք ֆինանսական ռեսուրսների հավաքարկմանը, լեթե մենք գյուղացիական կուտակումների հոսանքը դեպի պետութունը չուժեղացնենք նույնպիսի չափով, ինչպես դա ապահովել ենք բանվորների և ծառայողների կուտակումների նկատմամբ, ապա մենք մեր դասակարգային թշնամիների ձեռքը կտանք ավելորդ փաստեր, վորպեսզի մեր ֆինանսական պլանների վոչնչանալու հնարավորութունը հաստատեն:

Կապիտալիստական աշխարհի ինքնազգացողութունը ավելի և ավելի պետք է վորոշվի, նայած մեր հաջողութուններին և անհաջողութուններին՝ հնգամ-

լակի կատարման և մեր հսկիչ թվերի իրացման գործում։ Այդ պլանների իրագործումը պահանջում է բոլորիցս դժոխալին լարվածութուն և շատ մեծ խնայողութուն։ Յեթե գերմանական բուրժուազիան, վորը հակապրո-լետարական և հակալուղացիական ուժ լինելով, հա-ջողեցնում է աշխատավոր մասսայի խնայողութուն-ները պետական հունի մեջ անհի՛ պատերազմի հե-տևանքները ամօքելու և իրենց պլանների իրագործ-ման միջոցներ կուտակելու նպատակով, իսկ սպառ-ման ընտելավառում նույնպես սահմանափակումներ և անում, ապա, իհարկե, մենք մեր տրամադրության տակ ավելի մեծ հնարավորութուններ ունենք լան-վորների և գյուղացիների միջոցները նրանց հարա-դատ, մոտ գործի՝ սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու։

**ԿԱՒԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ԺԻՇՏ ՈՒՏԱԳՈՐ-
ԾՈՒՄԸ՝ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Ե**

Բովական հիմնական հույսեր ե դնում կապիտալիս-տական աշխարհը մեր հսկիչ թվերի անիրագործելի լինելու վրա՝ կատակցված կադրերի հսկայական պա-կասության հետ։

«Եկանոմիստում» հնդամյակին նվիրած հոդվածների հեղինակը գրում ե.

«Ռուսաստանում՝ պրոֆեսիոնալ-պատրաստված ճար-տարապետներ ունենալու խնդիրը շատ ավելի լուրջ է, քան այդ կարելի չե պատկերացնել։ Մինչև այժմ ա-ռաջարկված միջոցներն այդ խնդրի լուծման համար անհնալանի կերպով անբավարար են։ Դպրոցներում ուսուցման կրճատումը 4-ից 3 տարի, այդ դպրոցնե-

րում անընդհատ շարաթնների սահմանելը, նրանց վերածելը ցերեկվա և գիշերալին դպրոցների, -- այդ բոլորը լավագույն դեպքում ճարտարապետների թիվը կարող են կրկնապատկել, սակայն դա անխուսափելիորեն նրանց վորակը պետք և ցածրացնի: Այդ բոլորով միասին մոտ 30 հազարի բաց և մնում, վորը բալլեիկներն առաջարկում են ծածկել. վորակյալ բանվորներից ճարտարապետների շտատի մեջ առաջ քաշելով:

Բայց ինչքան ել լուրջ և տեխնիկական «կադրեր» ստանալու խնդիրը, ներկայումս դեռ նա սուր չե և նրա ճնշումը կզգացվի միայն նոր ֆաբրիկաների բացմամբ:

Պետք և ասել, վոր բուրժուազիան մեր ամենաթույլ տեղերից մեկն և շոշափում:

Յես փաստեր չեմ բերի, վորոնց վրա վերջերս գամվել և հասարակական ուշադրությունը, -- առանձին մասնագետների կողմից կատարված ֆրասարարության և դավաճանության փաստեր, վոր կապիտալիստական խավերի դասակարգային ընդդիմադրության արտահայտություն և հանդիսանում և կուլակային կատաղի ընդդիմադրության հետ համընթաց և զնում. չես չպետք և կանգ առնեմ դրական փաստերի վրա, վորոնք խոսում են այն մասին, վոր վերջին տարիներս խորհրդային թթխմորի վրա սկսել են չերևալ իրոք, նոր, բանվորագյուղացիական գործին միանգամայն նվիրված կադրեր: Այդ բոլոր խնդիրները մեր կուսակցության Կենտկոմի նոր միայն վերջացած պլանումը կրկին անգամ դրավ ուղիղ և լայն կերպով:

Նոր կադրերի պատրաստման կատաղի վաղժի հետ

միասին մեր առաջ դրված և լեղած կադրերը լրիվ և
առավելագույն արդյունավետութիւնով որոշեցին
խնդիրը: Յեթե մեզ մոտ կան առանձին մասնագետ-
ների թշնամական վերաբերմունքի փաստեր՝ դեպի
պրոլետարական դիկտատուրան, ապա մենք ունենք
մի ամբողջ շարք նաև ամալիսի դեպքեր, իբրև մենք
վոչ-բավական լրիվ կերպով և արդյունավետութիւնով
ենք որոշեցին խորհրդային իշխանութիւնը մոտ
կանգնած՝ տեխնիկայի և գիտութիւն աշխատավոր-
ներին:

Տնտեսական շինարարութեան տեմպերի լարվածու-
թիւնը բնակւոնորին անդրադառնում և մասնագետ-
ների աշխատանքների վրա: Յեթե մենք մասնագետ-
ների աշխատանքների ալդ անխուսափելի և հարկա-
վոր լարվածութեանն ամբողջենք և ամբողջութեամբ
թիւնը, վորը բոլորում և մեր անշնորհքութեամբ,
աշխատանքն ուղիղ կազմակերպելու մեր անկարող-
ութեամբ, ինչե մենք մեր մասնագետներին դա-
տարկ հանձնարարութեաններով բեռնավորում ենք,
որոշեցինք ենք նրանց վոչ ուղիղ կերպով,—ապա
պարզ և, վոր դրանով մենք հիմնական խնդիրների
լուծումը բարդացնում ենք:

Մենք անպայմանորեն բավական դրական արդյունք-
ներ ունենք հասարակական քննադատութեան, վո-
րը ծավալված և մեր աշխատանքների բոլոր ողակնե-
րում և վորը մեզ ոգնում և շոշափել և վերացնել մի
շարք թերութեաններ: Սակայն ուշադրութեամբ
չպետք և բաց թողնել և ամբողջական, վոր ամբողջ-
քննադատութեամբ ընթացակցվում և աշխատանքը
խանգարող խեղաթելութեամբ:

կանց քաշում ենք իզուր տեղը, առանձին սխալները, վորոնց հետ ցուցահանվում են յերբեմն ոգտավետ նախաձեռնումն և անհրաժեշտ ոխակ, մենք ուռցնում ենք: Յերբեմն մենք չենք կարողանում մի բան, վոր մենք ենք ուզում, խելամառերն բացատրել նրանց, վորոնք բարեխղճորեն ցանկանում են ոգնել շինարարությանը: Նրանք յերբեմն չգիտեն, թե իրենցից ինչ են ուզում: Այդ դժբախտությանը հայհոյանքը քիչ և ոգնում: Ինչպես հայտնի չե, անկարությունը և ճընշվածությունը ստեղծագործող աշխատանքի մեջ վատ ոգնականներ են հանդիսանում:

Կուսակցութունն ու խորհրդային իշխանությունը ձգտում են ապահովել առավելագույն նպաստավոր մթնոլորտ այն մասնագետների համար, վորոնք դեպի աշխատանքը բարեխիղճ վերաբերմունք ունեն: Յերբեմն, սակայն, գործնականում այդ խեղաթյուրվում և Ստվերին զարնելը այն տարրը չե հանդիսանում, վորը նպաստում և ստեղծագործող ուժերի զարգացմանը: Նույնիսկ հին ճորտական Ռուսաստանը, վորտեղ մի ասացվածք գոյություն ուներ, թե «ծեծվածի փոխարենը յերկու չծեծված են տալիս», նույնիսկ հին ճորտական Ռուսաստանը այդ ասացվածքի մեջ մի վորոշ փոփոխություն և մտցրել. «վոչ միշտ վզակոթին, յերբեմն ել գլխին»:

Յես կուզեյի մեր մասնագետների նախաձեռնումի ու հենքդիալի ապաշնորհ և գիշատողական վատնման մի որինազ բերել: Լենինգրադում վերջանում և «Կրասնի Ուտյարը» նոր ելեկտրոկայանի խոշորագույն շինարարությունը: Այս տարվա Հոկտեմբերյան տարեգարձին գործի չե դրված առաջին տուրքինը, իսկ

գարնանը պետք է գործի դնվեն և մնացածները Այդ
շինարարութիւնը, ինչպես բոլոր նրանք, վորոնք
այդ գործի հետ առնչութիւն ունեն և հասկանում են
այն, հաստատում են, վոր տարված է մեծ նշողու-
թյամբ և ելեկտրոշինարարութիւն մեջ մտցրել է բա-
վական նորութիւններ: Այդ հոշոդ արդիւնքը ճար-
տարապետների և բանվորների կոլեկտիվի բարեխիղճ
աշխատանքի գործն է: Շինարարութիւնն ընթացել է
փորձված, տաղանդավոր և տնչափորեն բարեխիղճ,
հեղափոխութիւն առաջին որերից մեզ հետ աշխատող
ճարտարապետա-տեխնիկական դիրեկտոր ընկ. Կոտո-
մինի ղեկավարութիւնը: Յեթե այժմ, չերբ այդ շինա-
րարութիւնը, վորը, լեթե չեմ սխալվում, արժեքով
40 միլիոն ուրլի լե, վերջանում է, նախնք այն պալ-
մանների վրա, վորոնց մեջ նա ընթացել է, ծանո-
թանանք այն մթնոլորտի հետ, վորը լեղիլ է այդ շի-
նարարութիւն, ճարտարապետների և մասնավորա-
պես ճարտարապետ Կոտոմինի շուրջը, ապա կստացվի
անախորժելի պատկեր: Յեթե այժմ կարդաք (չես այդ
արիլ եմ) ճարտարապետ Կոտոմինի աշխատանքների
վերաբերյալ նկատողութիւնները՝ պատի և ընդհանուր
թերթերում, ապա կտեսնեք, վոր գործնական քննա-
դատական հոգւածների հետ միասին, վորոնք որինա-
կանորեն արտահայտում են անհամապատասխան և կաս-
կած շինարարութիւն այս կամ այն առանձին մասերի
առթիւ, կան վոչ սակավ նկատողութիւններ և հոգ-
ւածներ՝ խայտառակ, չհիմնավորված, հաճախ անբա-
րեխիղճ, թոււնավորելու սահմաններն անցնող բնույ-
թի: Կարելի չե պատկերացնել, թե ինչքան ոգտավետ
ենքրպիա չե վատնվել, տնընկերական, հաճախ զգվելի

վերաբերմունքի ազդեցութիւն տակ՝ դեպի ղեկավարող և բարեխիղճ կադրերը:

Սոցիալիզմի հաջողակ շինարարությունը գիտական մեթի հաղթանակ է մտանկում: Անհմար է սոցիալիզմը կառուցել առանց գիտության յեղ սեխնիկայի մեջ հսկայական հաջողություններ: Յեղ մեմ գիտության յեղ սեխնիկայի այն անմնավորություններն, վորոնց ցանկանում են ոգնել մեղ վերափոխելու հին, նորական, сермяж-хью Ռուսաստանը նոր սոցիալիսականի, մեր օարբերում անպայման պատվաւոր սեղ պեսք է ապահովենք:

Կատարելապես սխաղ կլինենք և անճիշտ՝ փորձել, ինչպես այդ յերբեմն արվում է, մատնացուցց անելով մարդկային եներգիայի և ուժերի խնայողութիւն վրա, եներգիայի և ուժերի կրողների պաշտպանման հարց դնել, անկախ այդ ուժերի դեպի ուր ուղղված լինելուց: Մենք պետք է հաշվի առնենք վոչ միայն ուժի մեծութիւնը՝ այլև նրա նպատակաձգտումը: Հաճախ լինում է, վոր շատ պատվավոր և բարձր իմացական ուժ մեր շինարարութիւնից մի կողմն է քաղվում, փորձում է մեր շինարարութիւնը տանել կապիտալիստական ռեստավրացիայի ուղիով: Մենք, հասկանալի չե, նման ուժին պետք է նայենք վորպես բացասական-թշնամական մեծութիւն, վորը հարկավոր է հաղթահարել:

ՍՈՎՈՐԵԼ ԶԻՇՏ ԿԵՐՊՈՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ԲԱՆՎՈՐ-ՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՃՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք դեպքերում թե մեծ և թե ամենափոքր փաստերի վրա մենք կարող ենք համոզվել, թե ինչպես հաճախ բանվոր դասակարգի և գյուղացիական մասսայի ակտիվութիւնն ու եներգիան, շնորհիվ մեր

մարմիններն անբավարար կարողականութիւն, շնորհիվ մեր ռուսական անձկնութիւն, իզուր վատնւում են։

Կարտոֆիլի մթերման հետ կապված մի համեմատաբար փոքրիկ փաստ։ Այդ գործի մեջ փոքրիկ ուշացումը, մեր փոխադրութիւն պայմաններից բղխող անխուսափելի դժվարութիւնները պահանջեցին հասարակական ուժերի լարված հավաքարկում, հարվածային կարգով անցկացնելու՝ կարտոֆիլի բաշխման և նրա պահպանութիւնը կազմակերպելու անհրաժեշտ ձեռնարկումներ։ Մենք կարող ենք հաստատել, վոր շնորհիվ այն բոլոր լեռանդի, վոր հայտնաբերեցին Մոսկվայի խորհուրդը և նրա ներկայացուցիչը— ընկ. խոպլյանկինը, կամ Լենինգրադի խորհուրդը՝ հանձնա ընկ. Կամարովի և մի շարք ալ աշխատակիցների, կուսակցական մարմինների ինքնազոհ վերաբերմունքի, և՛ կուսակցական և՛ անկուսակցական բանվորների (առանձնապես հարկավոր և նշել լեռնաօգնութիւն հայտնաբերած լեռանդը և բարեխղճութիւնը), գործը կառարվեց վոչ վատ։ Սակայն չեն փաստերը, մասնաւորապես կոռպորատիվ մարմինների կողմից, վորոնք վկայում են, թե վոչ միշտ և վոչ ել լրիվ և ոգտադործվել հասարակական բովանդակ լեռանդն ու ինիցիատիվան։

Յուրաքանչյուր գործում բանվորների և գյուղացի- ութիւն ախտիվութիւն աճումը կարող և հակադական արդյունքներ տալ, լեթե մենք բարձրացնենք ալ լեռանդի ոգտադործման ընդունակութիւնը և ալն ուղղենք ճիշտ հունով։

Հաճախակի դեպքերում բանվորական հասարակայնութիւն և գյուղացիական ախտիվութիւն ուղիղ և

լայն ուղտագործմանը խանդարում են մեր բյուրոկրատական, գերկենտրոնացնող, գերատեսչական պետությունները:

Հաճախ դա տեղի չե ունենում շնորհիվ անհրաժեշտ կազմակերպչական փորձի բացակայության այն կադրերի մոտ, վորոնք գործի գլուխ են կանգնած, և շնորհիվ առատ ինքնահավանության և պարծենկոտության: Համաձայն այն նախնական զգացումի, վորը հատուկ և ամեն մի սակավ փորձառություն ունեցող կազմակերպողի, նրանք յերեմի ցանկանում են բոլորն անել սեփական ձեռքերով, ամեն ինչ դեպի ինքը և դեպի իր գերատեսչությունը քաշել, և, իհարկե, անճշտի կերպով են կարկատվում:

Առանց ճիշտ համաչափության՝ անհրաժեշտ խիստ պրոլետարական կենտրոնացման, առանց վորի մենք չենք կարող առաջ տանել սոցիալիստական շինարարությունը, և ստորին կազմակերպությունների պատասխանատվության միջև՝ իրենց աշխատանքների համար, այսինքն վորոշ գործառնությունների ապակենտրոնացման միջև, մենք չենք կարող ամբողջութամբ ուղտագործել բանվորների և գյուղացիների ախտիվությունը և վերջ տալ այն կարգերին, վորոնց պայմաններում բանվորական մասսաների և նրանց առաջընթացների եներգիան և ախտիվությունն և վատնվում պիշատիչորեն:

**ԲԱՐԻԼԱՎԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ, ԱՆՇԵՂՈՐԵՆ
ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԻՆՔՆԱՐԺԵՔՆ ԻՋԵՑՆԵԼ**

Ի միջի այլոց բուրժուազիան մեծ հույսեր և դնում մեր տնտեսական պլանների քանդման վրա, շնորհիվ մեր աշխատանքի վորակի ցածր մակարդակի:

Նույն «Եկանոմիստը» գրում է, վոր աշխատանքը Ռուսաստանում թանկ է անարտադրող և հանդիսա-
նում, վոր սոցիալիստական մրցությունն անհաստատ է
և ակնկալած արդյունքները չի տվել: Այդ հաստատվում
և հնգամյակի առաջին տարվա առաջադրումների մի
մասի չիրականացման հաշվառմամբ՝ մեր աշխատանքի
արտադրողականության և ինքնարժեքի իջեցման վերա-
բերյալ Պետք է ասել, վոր այդ բնագավառում առա-
ջադրությունների լրիվ չկատարվելը անկասկածելիո-
րեն մեր աշխատանքի մեջ սև բիծ է հանդիսանում:
Մեր տնտեսական տարվա արդյունքներն այստեղ ան-
գոհացուցիչ են: Ինքնարժեքի իջեցման մասում մենք
չկարողացանք նշումը ամբողջութամբ կատարել: Բո-
լոր օրյակով ուսմանները կալին — պակսում երմիայն
ճիշտ և ժամանակին դործը կատարելու ընդունակու-
թյունը: Այդ գոյուշավորության և կամքի առավելա-
գույն լարվածության անհրաժեշտություն է ազդանշում՝
հնգամյակի առաջիկա տարվա առաջադրությունների
կատարման գործում: Յեթե մենք կարողանանք իրաց-
նել հսկիչ թվերի մեր ցուցանիշները, ապա հաջորդ
տարվա սկզբին «Եկանոմիստում» լույս կտեսնեն կա-
պիտալիզմի շանսերի տեսակետից ավելի շատ ան-
հանգստացնող հողվածներ, վորոնք կխոսեն դժլարու-
թյունների հաղթահարման վճռական ձգտման մասին:

Վորպեսզի մենք կարողանանք հաջողութամբ առա-
ջադրությունները կատարել, պետք է ՌՍՖՖՀ-ի սահ-
մաններում գտնվող արդյունաբերությունը բարձրաց-
նենք 25,4%, իսկ ՌՍՖՖՀ Ժողտնտխորհին լնթեկա
արդյունաբերության մեջ՝ բարձրացնել 26,1%: Այդ
տոկոսը կատարելապես հնարավոր է իրագործել: Ան-

հրաժեշտ ե հաշվի առնել, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացումը $1^0/0$ միայն մեր ՌՍՖՖՀ-ի արդյունաբերության մեջ տալիս ե $10^{1/2}$ միլ. ո. չափով հավելյալ միջոցներ. իսկ Միության մեջ ինքնարժեքի իջեցումը $1^0/0$ -ով, նշանակում ե 130 միլ. ուղբի հավելյալ ստանալ: Ինքնարժեքի իջեցումը $1^0/0$ -ով ՌՍՖՖՀ-ի ժողտնտխորհին չենթադա արդյունաբերության մեջ, նշանակում ե $52^{1/2}$ միլ. ուղբի ստանալ: Մեր բոլոր հսկիչ թվերում այդ միլիոնները գրված են, սակայն մենք նրանց կարող ենք կորցնել, չեթե ուղիղ աշխատանք չկարողանանք ապահովել և չեթե «Նկատմաբար» հույսերից վոմանք արգարանան:

Հարկավոր ե ուղղակի ասել, վոր մեր աշխատանքի վորակի աչն պայմաններում, վոր մենք ներկայումս ունենք, մեզ համար այդ նշումների կենսագործելը ամբողջությամբ, մեր ուժերից վեր կլինի: Վորպեսզի մենք կարողանանք այն կենսագործել, կառավարության յուրաքանչյուր որգան, յուրաքանչյուր բանվոր յեվ գյուղացի իր առխառանքի վորակը պեճ ե բարձրացնի: Իսկ դա հասարակական ախիվության ավելի մեծ հավաքակման յեվ նրա ուղիղ ոգագործման անհրաժեշտություն ե առաջ բերում:

Ճես վերջացնում եմ անգլիական «Նկատմաբար» ժուռնալի վերջին քաղվածքով նրա համար, վորպեսզի մի ավելորդ տնգամ ընդգծած լինեմ, թե ինչպես մեր տնտեսական պլանի լարվածությունը հաշվի չե առնելովում ոտարերկրյա մեր հարևանների կողմից:

«... Այդ թվերը ցույց են տալիս, վոր պլանի $66^0/0$ նշանակված են ֆինանսավորելու ժողովրդական տնտեսությունը, վոր $23^0/0$ սոցիալական և կուլտուրա-

կան պահանջներին ե հատկացվում, իսկ 11⁰/₀ պետական ապարատի և չեղկրի պաշտպանութիւնն ե գնում: Տվլալ շրջանում հնարավոր ե միայն մեկ բացատրութիւն,—այն, վոր այդ պլանը, կարիք յեղած դեպքի համար, վորպես պահեստ, յեկամքի անձեռնամուխ մնացած ադբլուր չի թողնում յեվ վոր նա «Ֆինանսների լարվածութիւն» բացառիկ ուրնակ ե համդիսանում, նման պահեստազմական ժամանակի յեվրոպական պետութիւնների ֆինանսներին:

Այստեղ բացահայտորեն հուշեր ե տածվում, վոր մեր տնտեսական դրութիւն լարվածութիւնը, վորը մոտենում ե պատերազմական ժամանակի լարվածութիւն, տոկալ չենք կարող, վոր բանվորներն ու գյուղացիները նման լարվածութիւն չեն կարող տանել, վորը կապիտալիստական աշխարհում հնարավոր ե միայն պատերազմական սպառնալիքի տակ:

Վորպեսզի հաջողութիւնը կենսագործենք մեր բոլոր առաջադրումները, մենք բոլորս պետք ե համակվենք այն մտքով, վոր մենք գտնվում ենք գրեթե պատերազմական պայմաններում, վոր ամեն մի թափթփվածութիւն, աբլումովչինա, անպատասխանատվութիւն և մեր աշխատանքների մեջ անճշտութիւն մի հարված ե սոցիալիստական շինարարութիւն գործին: Տնտեսական շինարարութիւն լարված պայմաններում կլանքը մեզ պետք ե վերակազմե ամենավճռական կերպով: Վոչ մի կերպ հարմար մատերիալ չի կարող ճանաչվել մարդկային այն մատերիալը, վոր ալժմ մենք ենք մեզնից ներկայացնում:

Համապատասխան մեր տնտեսութիւն մեջ մետաղի դերի բարձրացման, պետք ե ավելանա մեր բնույթի

մեջ մետաղի բաժինը: Դա մեր սոցիալիստական շինարարութեան կենսագործման համար տարվող պայքարի մեջ՝ շանսերից մեկն է հանդիսանում:

Տոկոսնություն, անհողդողություն, սխտեմ և համառություն՝ փոխարեն թուլամորթութեան և այն բարեկեցութեան ու նրբամարմնութեան, վորոնք մի ժամանակ ճանաչվում էին վորպես սլավոնական բնավորութեան անհրաժեշտ և գրավիչ կողմը—ահա թե մեզ ինչ է հարկավոր և ինչն է զարգացնում հեղափոխությունը: Անխնա ինքնաստուգումը հանդիսանում է պրոլետարական հեղափոխութեան բնորոշ առանձնահատկությունը: Այդ բանի վրա մատուցել է արել դեռ Մարքսը: Յես թույլ եմ տալիս բերելու մի ցիտատ.—

«Բուրժուական հեղափոխությունները... արագորեն հաջողությունից հաջողութեան են ձգտում, նրանց դրամատիկական եփեկտները շլացուցիչ են, մարդիկ և դեպքերը վորպես թե բենգալյան կրակով լինեն լուսավորված, ամենորոյա տիրող տրամադրությունն է հանդիսանում եջատաղը. սակայն նրանք շուտանցիկ են, արագորեն հասնում են իրենց բարձրագույն կետին և արեցման տևական տրամադրությունը ընդգրկում է հասարակութեան ամբողջ առաջ, քան նա կարողանում է մրրիկի և ընդվզումի շրջանի արդյունքները լուրացնել զգաստ կերպով: Պրոլետարական հեղափոխությունները, ընդհակառակն, անընդհատորեն իրենք իրենց քննադատում են, յերբեմն ել դադարեցնում իրենց ընթացքը, դառնում են հետ և նորեն սկսում այն, վորը ըստ յերևույթին վերջացած էր համարվում, անխնա դաժանութեամբ իրենց առաջին փորձերի թերառությունը, թուլությունը, պակասություններն են

ծաղրում, և կարծես թե հակառակորդին տապալում են միայն նրա համար, վորպեսզի նա նոր ուժեր ժողովի և իրենց առաջ դուրս գա ել ավելի հզոր, նորից և նորից են նահանջում հետ, վախենալով իրենց սեփական խնդիրների անորոշակի վիժխարիությունից, մինչև վոր չեն ստեղծվի ամեն տեսակի նահանջի հնարավորությունը բացասող պայմաններ¹։

Մարքսն ավելի լավ, քան վորևե մեկ ուրիշը հասկանում եր հեղափոխության մեխանիկան, և այն, ինչ ճիշտ և լեզել պրոլետարիատի իշխանության համար պալքարի նախապատրաստման պայմաններում և իշխանություն դրավելու համար մղված մարտերում, փնտում և ճիշտ և՛ հեղափոխական շինարարության պայմաններում։


Հեղափոխության այդ տեխնիկայի չըմբռնելը բնորոշ և մեր թշնամիների համար և նույնպես մեր այն «բարեկամների» համար, վորոնք հեղափոխության պրոցեսում կորցրել են վորևե բան Մարքսի և Լենինի ուսմունքից։

Մեր թշնամիները հուսադրվում են, վոր հեղափոխությունը սպառված և, վոր խոսք կարող և լինել միայն Հոկտեմբերի նվաճումների լուծարքի ձևերի մասին։ Չորս տարի սրանից առաջ սմենավեխովական Ուստրյալովն այդ հույսը կապում եր մասսայի պասիվության հետ, ասելով՝ «Մոնտեսկիոն շատ արդարացի լեր, լերք պնդում եր, վոր ժողովուրդը գործունյա չի կամ չափից դուրս, կամ անբավարար Նա լերբեմն հարյուրհազար ձեռքերը միասին և շուռ տալիս, իսկ լեր-

¹ К. Маркс, Восемнадцатое Брюмера

բեմն ել հարյուր հազար վոսքերով շարժվում և վորպես միջատք:

Կասկած չկա, վոր մեր թշնամիներն իրենց հաշիվների մեջ սխալվեցին: Սխալվեցին և նրանք, վորոնք շեշտը դնում եյին աճման՝ որգանական խաղաղ շրջանի և դասակարգային պայքարի սրվածությունից թեքվելու վրա, վորը անխուսափելիորեն բղխում և մեր տնտեսական զարգացման հակասությունից: Մեր առաջ և վոչ թե հեղափոխության մարումը, այլ պրոլետարական հեղափոխության տնտեսության հզոր աճումը: Բանվորների և գյուղացիների մասսաները, վորոնք մեր թշնամիների նախատեսությամբ պետք և սողային վորպես միջատներ, վորպես կրիա, տալիս են սոցիալիստական մրցության, անընդհատ արտադրության անցնելու և աշխատանքի հավաքական ձևերում՝ յեռանդի չտեսնված որինականք: Մեր դասակարգային հակառակորդները յեւ յերկրի ներսում յեւ դուրսը՝ դեռ ուժեղ են, նրանք դեռ օտո քե քիչ հաջող փորձեր կունենան մեր ժնարարությունը խափանելու: Սակայն անկասկած եմք բան, վոր պատմությունը մեր կողմն և յեւ յերե մենք կարողանանք բանվոր-գյուղացիական մասսայի բովանդակ կամքը հավաքակել, ապա սոցիալիստական ժնարարության հնգամյա պլանի յերկրորդ տարին ի կատար կածվի ավելի մեծ հաջողությամբ, քան առաջին տարին և յեղի:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	69
1. Նախնական նկատողութիւններ . . .	3
2. Դասակարգային վերադասավորում . . .	5
3. Տնտեսական փոփոխութիւնները գլուղում . . .	18
4. Պլանը վերածել պարզ և հստակ առաջադրում- ների և հասցնել այն մինչ ստորին ողակները . . .	19
5. Հասնել կոլտնտեսութիւնների և խորհրդն- տեսութիւնների վորակական աճմանը . . .	23
6. Միջոցների հավաքարկում . . .	24
7 Հատուկ ուշադրութիւն անասնաբուծու- թյանը	29
8. Պայքարել կուլակութեան ֆեոտակարութեան դեմ՝ անասնաբուծեան բնագավառում . . .	32
9. Անասնաբուծեան զարգացման ուղիները . . .	33
10. Վերակառուցումը գլուղատնտեսութեան հսկա- յական աճում և ապահովում	39
11. Լարված պլանները պահանջում են մեր բոլոր ուժերի առավելագույն լարվածութիւն . . .	41
12. Կադրերի պատրաստումը, նրանց ճիշտ ոգ- տագործումը՝ կարևորագույն խնդիրն է . . .	45
13. Սովորել ճիշտ կերպով ոգտագործել բան- վորների և գլուղացիների աճող ախտիվու- թիւնը	50
14. Բարելավել աշխատանքի վորակը, անշեղո- րեն բարձրացնել արտադրողականութիւնը և ինքնարժեքն իջեցնել	52

[18]4

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035323

A $\frac{7}{1729}$